# Համաձայնագիր-1
# 03.05.17թ. կնքված N ՀՀԿԱ-ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-(17/1)-15/8-3 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

**ք. Երևան** «24» մայիսի
**2017թ.**

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն (այսուհետ՝ Գնորդ), ի դեմս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի մի կողմից, և «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ն, (այսուհետ՝ Վաճառող), ի դեմս ընկերության տնօրեն Ա.Մխիթարյանի, մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 03.05.17թ. կնքված N ՀՀԿԱ-ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-(17/1)-15/8-3 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 9.4 կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը որոշեցին՝**

1.1. Պայմանագրի 9.2 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

1.2. Սահմանել, որ Գնորդը պայմանագրով նախատեսված մատակարարված ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ քան 2017 թվականի դեկտեմբերի 25-ը:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե | «ԷԴՎԱՐԴ ՔՈՄՓՅՈՒԹԵՐՍ» ՍՊԸ |
| ք. Երևան, Մովսես Խորենացու 3 | ՀՀ ք. Երևան, Նաիրի Զարյան 22 ա |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900013202016, 900013574018 | Հ/Հ 2050022388351001 |
| ՀՎՀՀ 02647057 | ՀՎՀՀ 00102216 |
| ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար | Տնօրեն |
| *Ա.Սահակյան* ______ (ստորագրություն)Կ.Տ | *Ա. Մխիթարյան* ______ (ստորագրություն)Կ.Տ |

Հավելված
Հաստատված է
«03» մայիսի 2017թ. կնքված
N ՀՀԿԱ-ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-(17/1)-15/8-3
գնման պայմանագրի փոփոխությամբ

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**ՀՀ դրամ**

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը* | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 2017թ. արտաբյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | Մինչև 2017 թվականի դեկտեմբերի 25-ը | **Ընդամենը Տարի** |
| **4** | **լազերային տպիչ** | **5122** | - | **5 475 000** | **5 475 000** | **5 475 000** | **5 475 000** | **5 475 000** | **5 475 000** | **5 475 000** | **5 475 000** |

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մովսես Խորենացու 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013202016, 900013574018
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար

***Ա.Սահակյան*** ____________
(ստորագրություն)Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ԷԴՎԱՐԴ ՔՈՄՓՅՈՒԹԵՐՍ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Նաիրի Զարյան 22 ա
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022388351001
ՀՎՀՀ 00102216
Տնօրեն

***Ա. Մխիթարյան*** ____________
(ստորագրություն)Կ.Տ